Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ. հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Նկարագրական խոսքի զարգացումը 8-րդ դասարանում գրական երկերի տեքստերի ուսումնասիրության գործընթացում:
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Սոֆյա Քերոբյան Արտուշի Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ +37477067481 sofya.qerobyan@mail.ru Հայոց լեզու Գրականություն 8-րդ դասարան

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Բալահովտի Ի.Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց +37477 676700 balahovit.schoolsite.am https://balahovit.schoolsite.am/

Բովանդակություն

Ներածություն 3
Հիմնական բովանդակություն 7
Եզրակացություններ, առաջարկություններ 19
Օգտագործված գրականության ցանկ 20
Հավելվածներ 21

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Ներածություն** Արդի հասարակությանն անհրաժեշտ են ստեղծագործաբար մտածող, ինքնակատարելագործման ձգտող, ոչ ստանդարտ իրավիճակներում արագ կողմնորոշվող զարգացած մասնագետներ, համագործակցային և հաղորդակցական կարողունակություններ ունեցող անհատներ: Մոտեցումներ, որոնք կրթության առջև դնում են մի շարք նոր խնդիրների առաջնահերթ լուծումներ, այն է՝ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու, դրանք կյանքի տարբեր ոլորտներում կիրառելու, ինքնակրթվելու, ինքնակատարելագործվելու կարողություններ, տրամաբանական, ստեղծագործական, քննադատական, վերլուծական մտածողության, լեզվամտածողության ձևավորման և շարունակական զարգացման հմտություններ: Նշված խնդիրների լուծումն առաջին հերթին ենթադրում է համալիր բարեփոխումների իրականացում հանրակրթության համակարգում: Բնականաբար կրթության համակարգի նորարարական փոփոխությունների իրականացման գործընթացի պատասխանատուն ուսուցիչն է, նոր ուսուցիչը: Այս առումով մենք կարևորում ենք ապագա ուսուցչի լեզվահաղորդակցական

	կարողունակության զարգացումը, նրա կողմից լեզուների յուրացման լեզվաբանական, մանկավարժական, հոգեբանական արդիական հայեցակետերի ուսումնասիրումը: Ուսուցիչը մշտապես շփվում է աշակերտների հետ, ուստի կարևորվում է ուսուցչի խոսքը, որի ազդեցության նախապայմաններից մեկը մայրենի լեզվին պատշաճ մակարդակով տիրապետելն է: Ուսուցչի կիրթ, տրամաբանորեն փաստարկված գրագետ խոսքը հնարավորություն է ընձեռում աշակերտներին ձեռք բերելու կրթական չափորոշիչներով նախատեսված գիտելիքների պաշար ու անհրաժեշտ կարողություններ, նպաստում նրանց անձնային որակների ձևավորմանն ու զարգացմանը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեբանական զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում են ճանաչողական

	ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական,համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Այսօր աշակերտների շրջանում խնդիր կա սեփական միտքը հստակ ձևակերպելու, գրագետ խոսելու, կարդացած տեքստերը վերարտադրելու, որևէ իրադարձություն նկարագրելու մեջ: **Հարց՝** Գրական տեքստի ուսումնասիրության ի՞նչ մեթոդներ ու հնարներ կարելի է կիրառել սովորողների նկարագրական խոսքը զարգացնելու համար (8-րդ դասարան): **Նպատակը՝** տարբեր մեթոդների, հնարների միջոցով աշակերտներին հնարավորություն տալ ուսումնասիրելու նկարագրական խոսքը, ապա հետազոտական աշխատանքի արդյունքում ձեռք բերածը կիրառել սեփական խոսքում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողությանն է ուղղված նպատակի	• Լեզվական գրագիտության կարողունակություն

ուսումնասիրությունը	
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	8-րդ դասարան 30 աշակերտ՝ 13 աղջիկ, 17 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունը կատարվել է դիտարկման մեթոդով: Կատարել եմ բաց հարցումներ, քննարկումներ, քանակական վերլուծություն դիագրամի տեսքով: Հետազոտության ընթացքում կիրառվել է Վենի գծապատկերը:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	10.09 -30.09 2023թ.

Հիմնական բովանդակություն

Պարագրաֆներ

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	**§1 Նկարագրական խոսք** Սկսած նախաայբբենական շրջանից մենք՝ ուսուցիչներս, աշակերտներին գաղափար ենք տալիս բանավոր և գրավոր խոսքի , պատումի, նախադասության մասին, զարգացնում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Հետագա ուսուցման ընթացքում ուսուցիչը աշակերտների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն ենք դարձնում, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանի դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ, լսարանի առջև ելույթ ունենա, պատկերավոր խոսքով գրավի զրուցակիցների ուշադրությունը : Որպեսզի այս ամենը դառնա շոշափելի իրականություն, երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել
<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	

և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային, մակաբույծ բառերից՝ բացատրելով, որ «ամեն մի ավելորդ բառ մոտավորապես նույնն է, ինչ դերասանի համար ավելորդ շարժումը, երաժշտի համար՝ ավելորդ ձայնը, հնչյունը, նկարչի համար ավելորդ գույնն ու վրձնահարվածը»:

§ 2 Ի՞նչ է նկարագրությունը:

Նկարագրությունը նկարագրելու գործողությունն ու ազդեցությունն է, այսինքն՝ խոսքի միջոցով մանրամասն բացատրել կամ ներկայացնել օբյեկտի, անձի, վայրի, իրավիճակի կամ իրադարձության բնութագրական հատկությունները:

Նկարագրությունը նախատեսված է ունկնդրին կամ ընթերցողին հնարավորություն տալ պատկերացնելու, մտովի վերարտադրելու նկրագրվող երևույթը, անձը, նրա արտաքին տեսքը:

Գրական-գեղարվեստական նկարագիրը լայնորեն կիրառվող միջոց է գրականության մեջ:Գրականությունը խոսքի արվեստ է, որն ընթերցողի առջև բացում է տարբեր ժամանակների պատկերներ, դաստիարակում վեհ, ազնիվ ու գեղեցիկ զգացումներ,

	զարգացնում երևակայությունն ու աշխարհաճանաչողությունը: Ուստի անհրաժեշտ է աշակերտին հաղորդակից դարձնել նկարագրական խոսքին՝ հղկելով լեզվամտածողությունը, հարստացնելով բառապաշարը:
Հետազոտության ընթացքը	Հետազոտությունը անցկացրել եմ 8-րդ դասարանի թիրախային խմբում: Հանձնարարել եմ երեխաներին կարդալ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոմը: Ինչո՞ւ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոմը, որովհետև պոեմում նկարագրական խոսքը և՛ մատչել է սովորողի համար, և՛ անչափ պատկերավոր: Սովորողների ուշադրությունը հրավիրում ենք վերնագրին, թե ինչու առումը և ոչ գրավումը: Փորձում ենք համատեղ քննարկումներով բացատրել այս հոմանիշ բառերի ոճական նրբությունը: Առում՝ առնել, վերցնել, ինչո՞ւ չէ, նաև գնել , իսկ գրավել կռվով կամ պայքարով: Այստեղ հուշում ենք,որ մեկ բառը նկարագրական մի ամբողջ պատկեր է ստեղծում: Պոեմը սկսվում է«Նախերգանքով», ուր գովերգվում է լավ գործի հավերժությունը: Պատահական չէ, որ զրույցը պատմում է թափառական աշուղը. նա բոլոր ժամանակների մեջ է, նա ժողովրդի հիշողության հավերժ մարմնացումն է: ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք Թափառական աշուղին, Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք, Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին։	Գործն է անմահ, լա՛վ իմացեք, Որ խոսվում է դարեդար, Երնե՛կ նըրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար։

Մարդը անցավոր հյուր է կյանքում իր ծննդյան փուչ օրից: Անցողիկ են սերը, գանձը, գեղեցկությունը: Պատմության մեջ մարդու գործն է հիշվում, հիշվում են և՛ լավը, և՛ վատը: Մարդկության պատմության մեջ շատ են խոսվում և սերնդեսերունդ փոխանցվում դավաճանության դեպքերը: Առանձին խմբերով կազմակերպում ենք զրույց-քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

1. ի՞նչ է դավաճանությունը
2. հանուն ինչի՞ կարելի է դավաճանել
3. հնարավո՞ր է ներել դավաճանությունը
4. արդյո՞ք հիշվում են դավաճանները:

Հուշում ենք, որ առաջին դավաճանը Հուդան էր՝ Քրիստոսի 12 աշակերտներից մեկը, դավաճան են նաև Մարկոս Բրուտոսը, Մերուժան Արծրունին: Ցուցադրում ենք Կարլ Թեոդոր ֆոն Պիլոտի «Կեսարի սպանությունը» նկարը՝ փորձելով կազմել նկարագրական խոսք կտավի շուրջ: Հիշեցնում ենք, որ սրանց հիման վրա ձևավորվել են նկարագրական արտահայտություններ, որոնք դարձել են թևավոր խոսքեր՝ «Հուդայի համբույր», «30 արծաթ», «Եվ դո՞ւ, Բրուտո՜ս»: Դավաճանությունը ողբերգականությամբ է

հագեցած:

Թումանյանը լսել էր Թմուկ բերդի մատնության մասին, և այդ փոքրիկ տեղեկությունը հիմք էր դարձել պոեմի ստեղծմանը: Նա փորձել էր ցույց տալ և՛ դավաճանության ամոթը, և՛ դավաճանի ներաշխարհը:

Թաթուլին ծնկի են բերում սիրած կինը և գինին՝ որպես սիրո արտահայտություն: Նադիր Շահը զորք է հավաքում և պաշարում է Թըմկա բերդը: Քառասուն օր ու գիշեր կռիվ են մղում, ու կանգուն է Թըմկա բերդը: Թուրանցին կգա, թե իրանցին, միշտ հաղթանակով է Թաթուլը վերադառնում է իր բերդը, որտեղ նրան սպասում է երիտասարդ կինը:

Այդ կնոջ սիրո մեջ է Թաթուլի անպարտելիության գաղտնիքը: Շենշող նկարագրությամբ է Թումանյանը պատկերում Թմկա տիրուհուն: Աշակերտների ուշադրությունը հրավիրում ենք նկարագրության գույնին , դրանից բխող ջերմությանը, լույսին և պատկերավոր արտահայտություններին .

Սիրո հընոց,
Կրակ ու բոց՝
Էնպես աչքեր թե ժըպտան,
Մարդու համար
Օրվա պես վառ
Գիշերները լույս կըտան:

Վարդի թերթեր՝
Էնպես շուրթեր
Թե հաղթություն քեզ մաղթեն,
Էլ քեզ ո՞չ Շահ,
Ո՞չ ահ ու մահ,
Ո՞չ զենք ու զորք կըհաղթեն:

Գրողը բառեր է շռայլում նրան նկարագրելիս.

Ծով են աչքերը Զավախքի դըստեր,
Ու կորչում է մարդ նըրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:

Արտաքին նկարագրությանը այսքան կարևորություն տալով՝ գրողը առավել է շեշտում այն ներքին գեհենը, որը կամաց-կամաց ծնվելու էր նրա հոգում: Շահը Թըմկա տիրուհու մոտ է ուղարկում իր երգչին և պատվիրում է երգել իր փառքը, հարստությունը... Թըմկա տիրուհին, լսելով երգը, տակնուվրա է լինում :

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՜յ նազանի աննըման.
Նայի Շահի՛ն, իրեն զորքի՛ն,
Աշխարհքի տերն անսահման...

Մեզ պես տըկար մարդ է նա էլ՝
Սիրուններին միշտ գերի.
Քու ճակատին թագ է վայել.
Լինիս շքե՛ղ թագուհի...

Լըսում է չքնաղ Թըմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից...
Ու դարձավ նա լո՛ւռ, դալո՛ւկ, մըտախո՛հ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

Ծնվում է հակադրությունը:.Դավաճանությունը հարազատ չէր տիրուհու էությանը, բայց մյուս կողմից էլ նրան գերում են արքայական փառքն ու մեծությունը:
Կռվից վերադարձած Թաթուլի և նրա զորքի համար Թըմկա տիրուհին ճոխ խնջույք է կազմակերպում: Խավար գիշերով գինին հոսում է հեղեղի նման:

— Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,
Բաժակներըդ լիուլի,
Խըմենք— Աստված կըտրուկ անի

Թուրը իմ քաջ Թաթուլի:

Աշակերտների ուշադրությունը շարունակ հրավիրում ենք նկարագրական խոսքին, օրինակ՝ խավար գիշեր, հեղեղի նման հոսող գինի և այլն: Խմում ու քնով են անցնում տերն ու զորքը:

Թումանյանը տիրուհուն սիմվոլիկ ներկայացնում է վիշապ օձի պատկերով, որը շրջապատել է ամբողջ ամրոցը և գլուխը դրել քնած Թաթուլի կրծքին: Օձը ընկալվում է մի կենդանի, որը խոցում է իրեն տաքացնողին, իսկ Թաթուլը այդ տաքացնողն էր, որը սիրով ու ջերմությամբ էր կնոջը շրջապատել: Տեսնում ենք դավաճան գործի զազրելի պատկերը՝ քուն մտած զինվորներ, բացվող դռներ, ավերված բերդ: Այնուհետև գրողը բացում է մարդկային հոգին իր ողջ զազրելիությամբ: Զղջում է, երբ տեսնում է իր արածի հետևանքները:

Ու լի դառնությամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն Թըմկա տիրուհուն.
— Պատասխան տո՜ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն…

— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

Ինչո՞ւ է տիրուհին հանկարծ զղջում և սկսում իրականությունը սթափ գնահատել՝ շահին համարելով խաբեբա. գուցե ի՞նքն էլ էր խաբված: Ցածր ու ստոր արարք էր կնոջ մատնությամբ ամրոց առնելը, և տիրուհին նրան հակադրում է բարձր ու վսեմ Թաթուլի հետ: Հարց է ծագում, թե ինչու տիրուհին, որ

այդ ամենը արել էր հանուն փառքի, ոչ մի շողոքորթ , քծնող պատասխան չի տալիս, որ վերջնական հասնի իր նպատակին, ցանկությանը, թագը վայելելուն, ինչո՞ւ է զղջում հայտնվում:Տիրուհին գուցե կշեռքի երկու նժարներին է դնում Թաթուլին ու շահին , հասկանում այն ,ինչ ուներ, և այն, ինչ ցանկանում էր ունենալ,բայց բոլորովին էլ չունեցավ, ու գնահատում այն, ինչ կորցրել է, ինչը այլևս իրենը չէ: Աշուղը բացի գանձից ու փառքից երգում էր շահի սերը՝ ասելով, որ նա էլ մահկանացու է, սիրուններին միշտ գերի : Տիրուհին հասկանում է, որ սերը, որը խոստացվել էր իրեն, կեղծ է եղել, ցնորք էր այն: Շահին անվանում է խաբեբա գուցե նաև այն պատճառով, որ ինքը երազային սիրո հետևից էր գնում: Սե՞ր էր նրա ուզածը, փա՞ռք, թե՞ մեծություն:. Տիրուհու սիրտը լցված էր ագահությամբ, որն էլ դարձավ նրա կործանման պատճառ: Համարձակ պատասխանից հետո շահը մահապատժի հրաման է տալիս:

Գել ու աղվես եկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,
Ցին ու ագռավ իջան ամպից,
Սև աչքերը հանեցին:

Պատահական չէ, որ Թումանյանը կարևորում է սիրտն ու աչքերը. չէ՞ որ երկուսն էլ անհագ են: Սովորողների հետ պոեմի վերլուծությունը կատարելուց հետո արել եմ հետևյալ հարցադրումները.

1. հանուն ինչի՞ տիրուհին դավաճանեց Թաթուլին,

2. ներելի՞ էր արարքը,
3. կարելի՞ է արդարացնել տիրուհուն:

Այնուհետև քննարկել ենք հետևյալ հարցերը.

1. ի՞նչ է նկարագրական խոսքը,
2. որո՞նք են պատկերավորման միջոցները,
3. արդյո՞ք պոեմում կան պատկերավորման միջոցներ

Արդյունքը



Այնուհետև սովորողներին բաժանել եմ 3 խմբի.

- «մակդիրագետներ»
- «համեմատագետներ»
- «փոխաբերագետներ»

Խմբերը պոեմից դուրս են գրել իրենց անվանը համապատասխան պատկերավորման միջոցները, այնուհետև փոխվել են տեղերով այնքան, մինչև յուրաքանչյուր խումբ դուրս է գրել թե՛ մակդիրները, թե՛ փոխաբերությունները և թե՛ համեմատությունները.

Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ: Անմահ գործ – մակդիր

	Խոսքըս, տեսեք, ո՞ւր է գընում, Քաջ որսկանի գյուլլի պես – համեմատություն Վարդի թերթեր՝ էնպես շուրթեր – համեմատություն Ու քունը փախավ սիրուն աչքերից… – մակդիր Հեղեղի նըման հոսում է գինին- համեմատություն Ծով են աչքերը Ձավախքի դըստեր, ծով աչքերը – մակդիր Արևի նման ճակատը պայծառ– համեմատություն Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար– համեմատություն: Աշակերտների ուշադրությունը հրավիրել ենք նաև պոեմում առկա չափազանցություններին, հանձնարարել մեկնաբանել ու բացատրել դրանց գործածության անհրաժեշտությունը գրողի կողմից: Սովորողները աշխատեցին համագործակցայն մթնոլորտում, արդյունքը վերլուծեցինք գրատախտակին, խմբերը մեծ ոգևորությամբ կատարեցին փոխադարձ լրացումներ: Արդյունքում ունեցանք բարելավված ուսուցում: Սովորողները Թմկա տիրուհու կերպարը համեմատեցին Մովսես Խորենացու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդազրույցի Շամիրամի կերպարին: Ի տարբերություն Շամիրամի՝ Թմկա տիրուհին զղջում էր իր արարքների համար: Շամիրամի դիմանկարը շատ բնորոշ է Թմկա տիրուհուն՝ չքնաղ, հպարտ, փառասեր: Վենի

գծապատկերով ներկայացնում ենք Թմկա տիրուհուն և Շամիրամին՝ նշելով նրանց նմանությունն ու տարբերությունը:



Դարձյալ կատարում ենք խմբային աշխատանք՝ կիրառելով հետևյալ բաժանումը և հաշվի առնելով սովորողների հմտություններն ու կարողությունները:

1-ին խումբ՝ նկարիչներ- նկարել Թմկա տիրուհուն և ներկայացնել լսարանին: Հայ և համաշխարհային գեղանկարչության մեջ կնոջ ի՞նչ դիմանկարներ կան, որ կարելի է ընտրել Թմկա տիրուհուն ներկայացնելու համար:

2-րդ խումբ՝ ռեժիսոր-եթե կինոնկար ստեղծելու լինեիք, ո՞ր դերասանուհուն կհրավիրեիք Թմկա տիրուհու դերը խաղալու համար, ինչո՞ւ...

3-րդ խումբ՝ երգահան, պարող- Ի՞նչ մեղեդի կարելի է զուգակցել կնոջ նկարագրությանը, ինչո՞ւ և պարային ի՞նչ շարժումներով կարելի է հաղորդել Թմկա տիրուհու գեղեցկությունը:

4-րդ խումբ՝ բանասերներ- նկարագրե՛ք Թմկա տիրուհուն բառերով՝ օգտագործելով պատկերավորման միջոցներ: Ձեր մտքում ի՞նչ տեսք ունի այդ կինը:

Աշխատանքն ավարտելուց հետո հանձնարարում ենք գրել նկարագրական

շարադրանք հետևյալ վերնագրերից մեկով՝ հուշելով,որ պիտի կիրառեն գրական երկերից սովորած բառերը և արտահայտությունները:

1. Թմկա տիրուհին իմ պատկերացմամբ,
2. Թմկա տիրուհին իմ մտապատկերում,
3. Եթե Թմկա տիրուհին ապրեր 21-րդ դարում,
4. Թմկա տիրուհին գեղեցկության մրցույթում:

Դասի ավարտին կատարել եմ նույն հարցադրումները և ստացել հետևյալ պատկերը.



Դիտարկման արդյունքում ունեցանք նկարագրական խոսքի աճ.

1. Ո՞րն է նկարագրական խոսքը **50%:**
2. Որո՞նք են պատկերավորման միջոցները **70%:**
3. Արդյո՞ք պոեմում կան պատկերավորման միջոցներ **80%:**

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտությունը ցույց տվեց, որ եթե նպատակ ենք դնում զարգացնել սովորողների նկարագրական խոսքը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշակի թիրախային գոտում նա անպայման ունենում է իր հետաքրքրությունները, որն էլ դառնում է ելակետ աշխատանքը իրականացնելու համար: Երեխաների բանավոր խոսքի զարգացման համար պետք է ստեղծվի հաղորդակցության այնպիսի միջավար, որտեղ երեխան ազատ ու անկաշկանդ մասնակցություն ցուցաբերի, հնարավորություն ունենա արտահայտելու իր դիրքորոշումն ու վերաբերմունքը, զարգանա նրա նկարագրական խոսքը: Հետազոտությունը կատարվեց դիտարկման մեթոդով, որի ընթացքում երեխաները աշխատեցին համագործակցային մթնոլորտում, հնարավորություն ունեցան ազատ արտահայտվելու, քննարկելու տարբեր հարցեր և իրավիճակներ, իրենց խոսքում կիրառեցին պատկերավորման միջոցներ՝ զգալով խոսքի գեղագիտական արժեքը: Արդյունքում հարստացավ երեխաների նկարագրական խոսքն ու բառապաշարը:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս.Գ., Աշակերտների խոսքի զարգացումը, Եր., «Լույս», 1973, 75 էջ

2. Հանրագիտարան - 19.08.2023

3. library.fes.de

4. Հ. Թումանյան - «Պոեմներ»

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	Դասի պլան.docx Թմկաբերդի առում.mp